

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն № )

**ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ**

Համալսարանի շրջանավարտների վերապատրաստման, մասնագիտական որակավորման բարձրացման գործընթացն իրականացնելու վերաբերյալ:

Սույն համագործակցության Հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) միջև: Այսուհետ Կոմիտեն և Համալսարանը կանվանվեն Կողմեր:

**ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Սույն Հուշագրի նպատակն է ապահովել Կոմիտեի «Ռեսուրսամեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ում Համալսարանի շրջանավարտների վերապատրաստումը, մասնագիտական որակավորման բարձրացումը:

**ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ**

Կողմերը պայմանավորվում են սույն Հուշագրի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրականացնել ստորև նշված միջոցառումները.

1. Կոմիտեն, իր ենթակայության «Ռեսուրսամեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով, իրականացնում է Համալսարանի ուսանողների և շրջանավարտների

վերապատրաստման, մասնագիտական որակավորման բարձրացման գործընթացը հետևյալ ոլորտներում. անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման, անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, անշարժ գույքի գնահատման, անշարժ գույքի հաշվառման (չափագրման), հողաշինարարության, գեոդեզիայի և քարտեզագրության և անշարժ գույքի շուկայի հետ կապված այլ մասնագիտական ոլորտներում:

- 1.1. Իր տարածքում՝ կոմիտեի մասնագետների ներգրավմամբ, Համալսարանի մասնագիտական ամբիոնների դասախոսների հետ համատեղ, ուսումնական պլաններին համապատասխան կազմակերպում է գորնական պարապմունքներ:
- 1.2. Անցկացնում է ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաներ:
- 1.3. Կազմակերպում է սեմինարներ:
- 1.4. Աջակցում է կոմիտեի մասնագետների ներգրավմանը բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքների իրականացման գործընթացում:
- 1.5. Պրակտիկաների ավարտից հետո հաստատում է յուրաքանչյուր ուսանողի կատարած աշխատանքի հաշվետվության օրագիրը:

## 2. Համալսարանը

- 2.1. Օժանդակում է ուսանողների արտադրական պրակտիկայի կազմակերպմանը և շրջանավարտների ներգրավմանը Կոմիտեի «Ուսումնամեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից (2-րդ բաժնի 1-ին կետում նշված մասնագիտությունների գծով) իրականացվող ուսումնական դասընթացներին:
  - 2.2. Կազմակերպում է խորհրդատվություն կոմիտեի մասնագետներին՝ իրենց գիտահետազոտական և մասնագիտական գործունեության իրականացման հարցերում:
  - 2.3. Օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցում է կոմիտեին՝ համակարգն էրիտասարդ մասնագետներով համալրելու գործընթացում:
3. Կողմերը կարող են իրականացնել սույն Հուշագրի նպատակներից բխող այլ միջոցառումներ:

### **3. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

Սույն Հուշագրի կիրառման և մեկնաբանության հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջև՝ խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

### **4. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԼՐԱՅՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ**

Սույն Հուշագրի դրույթների ցանկացած փոփոխություն կամ լրացում պետք է կատարվի Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

### **5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնցից յուրաքանչյուրը համարվում է բնօրինակ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: